

## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԳԼՏԱԿԱՆ

«Գեղարուեստ».— Գրական, գեղարուեստական, երաժշտական պատկերազարդ հանդէս խմբագրութեամբ

Պ ա Ր Ե Ղ Ի Ն Լ Ե Ն Ո Ն Ե Ա Ն Ի

Զարագ արի, 1911. № 4, Թիֆլիզ.

Պ. Գ. Լևոնեանը մի նախանձելի եռանդ ու աշխատասիրութիւն է հանդէս բերում «Գեղարուեստ»-ի խմբագրութեան և հրատարակութեան գործի մէջ: Այս հանդիսի ներկայ՝ չորրորդ համարը իւր նիւթերի բազմազանութեամբ և ճոխութեամբ գերազանցում է միւս երեք համարներից: Հետաքրքիր կազմուած են առաջին և երկրորդ բաժինները—Գեղարուեստի գրականն ու պատմականը. պատկերահանդէսի բաժնում շատ յաջող վերարտադրումների են բախտ ունեցել Մախոխեանի չորս տաղանդաւոր նկարները, Թորոմանեանի Զուարթնոց եկեղեցին ու խաչքարը: Շատ ցանկալի է, որ այդ բաժինը աւելի ճոխ և հարուստ լինէր, որովհետև միայն «Գեղարուեստ»-ի մէջ դա կարող էր համախմբուել և ծաղկել, մինչդեռ «Գեղարուեստ»-ի միւս բաժինները կարող են մեր միւս գրական-պարբերական հրատարակութիւնների մէջ սեղ գտնել: Գրական բաժինը հէնց այդ տեսակէից կարող էր և այդքան ճոխ չլինել, ինչպէս որ նա այս համարի մէջ է: Բայց և այնպէս մեզ ամենից շատ հետաքրքրողը գրական և քննադատական բաժիններն են, որոնց մասին և մի փոքր աւելի երկար ենք խօսելու:

Այդ ամբողջ բաժինը աւելի քան հարուստ է, ճոխ բովանդակութեամբ, նիւթառատ: 32 ոտանաւոր կայ միայն, և 15-ի չափ էլ մանր պատմութեամբներ. ըստ երևոյթին հէնց այդքանը բաւական է, որ մտքը մի առանձին բաւականութեամբ ուրախանար հայ գեղարուեստական-գրական նոր երևոյթների շատութեամբ: Բայց բանն էլ հէնց այն է, որ այդտեղ գեղարուեստականը նիւթի հետ համեմատած այնքան էլ առատ չէ: Եւ նիւթի շատութիւնը, այդ օրինակ առատութիւնը ոչ թէ օգնում է, այլ վնասում ամբողջական տպաւորութեանը: Բանաստեղծների մէջ կան մի քանի հանրածանօթ դէմքեր, որոնք մեր գրականութեան

մէջ արդէն յայտնի անուան տէր են: Յովհաննիսեան, Ծատուրեան, Իսահակեան, այլ և Արամ Չարբզ, Դեմիրճեան, Կուրղինեան, Յակոբ Յակոբեան, Կոստանեան: Մնացածը իրանց իսկական և կեղծ անուններով սկսնակներ են. Գ. Միսեան, Ս. Յ. Վարուժան, Արմ. Տիգրանեան, Լեոն Վանի, Լէյլի, Յ. Տէրենց, Սուսան, Կամարի, Գ. Շահինեան, Արշակ Վարդանեան, Սիմիկեան, Յ. Այվազեան: Ահա այսքան բանաստեղծներ մասնակցել են «Գեղարուեստ»-ին ու նրա համար ոտանաւորներ ստեղծել, և դժբախտաբար պիտի ասեմ, որ սակաւ բացառութեամբ—բոլորն էլ միջակ կամ անյաջող գործեր են տուել: Մի փոքրիկ ոտանաւորը այն ժամանակ է գեղեցիկ և գեղարուեստական, երբ նա մի իդէա կամ մի զգացմունք—լինեն զբանք նոր կամ հանրածանօթ—համապատասխան ձևերի մէջ է դնում, գտնում է արտայայտութեան յարմար եղանակներ և ընթերցողի մէջ առաջ է բերում որոշ—շատ որոշ տրամադրութիւն: Յիշուած ոտանաւորներից համարեա մեծ մասի մէջ բացակայում է այդ կողմը, մանաւանդ տրամադրութիւնը: Ինձ թւում է, թէ ոտանաւորը, փոքրիկ լիրիկական երկը-եթէ նա գրւում է հանդէս գալու համար, պիտի օժտուած լինի ընթերցողին իր զգացմունքով վառակելու, իր տրամադրութեամբ համակելու, այլապէս նա իզուր է աշխարհ գալիս: Իսկ այդ հնարաւոր է միայն այն դէպքում, երբ ինքը ոտանաւորը ունենայ տրամադրութիւն, լինի խոր և ապրած մոմենտի արդիւնք, արտայայտուած լինի անմիջական և յուզող շեշտերով: Ընթերցողին ինչ հետաքրքիր կարող է լինել որ և է մարդու (լինի անգամ այդ մարդը բանաստեղծ) սէրը, սիրոյ անվերջ հուովունները ոտանաւորների ձևով, եթէ դա չունի իր մէջ զծեր—հետաքրքիր նաև ընդհանուրին, տրամադրութիւններ—ընդունակ նաև անցնելու ուրիշներին, զգացմունք—համակելու նաև կարգացողներին, արտայայտութեան ձևեր նոր ու օրիգինալ, լեզու—պատկերաւոր ու ստեղծող: Եթէ այդ կողմերը չկան, ինչի համար են գրւում այդ անվերջ շարք ոտանաւորները: Բանաստեղծը սիրում է, աղջիկը նրա մօտ է գալիս, նրանք իրար շոյում են, փայփայում, յետոյ խռովում են, ապա նորից հաշտւում, ապա լաց լինում, վերջը ուրախանում, ու բոլորի վախճանն այն է լինում, որ բաժանւում են ու բանաստեղծն անբախտ է ու նստում գրում է իր ոտանաւորը: Ահա այս է հուովուած անվերջ և այդ էլ մեծ մասամբ հուովում է մեր բանաստեղծների սիրային ոտանաւորների մէջ. ու այդ կողմից «Գեղարուեստ»-ի այս համարում մեղանշում են ոչ միայն սկսնակ, այլ և մեր շատ յայտնի բանաստեղծները: Ինչ բան կայ գեղարուեստական, տրամադրական կամ համակող այսպիսի տողերի մէջ.

Եւ քո ծիծաղն արծաթաձայն ու մատղաշ  
 Հնչեց անոյշ, ասես կարկաշն աղբիւրի.  
 Նա քաղցր յուզեց իմ մենաժամն հոգեմատ—  
 Ու բերկրանքով քեզ զըրկեցի, իմ հուրի . . .

(Ալ. Ծատուրեան).

Կամ թէ

Իմ կեանքը թօշնե՛լ է—խամրել  
 Աշո՛ւն է եկել ինձ համար,  
 Օրերս հաշուել եմ—համրել  
 Օրերըս մթին ու խաւար . . .

(Ս. Յ.)

Կամ տեսէք Լեոն Վանին ինչեր է ասում իւր սիրուհու մա-  
 սին, մարդ ուղղակի դարգանդում է.

Օ՛, քու ակնարկը եթէ երկնքի մէջ բոցավառէր,  
 Բոլոր աստղերը մէկ գիշերուան մէջ պիտի թառամէին  
 Խորշակահար շուշաններու դիակոյտերուն պէս.

Բոլոր աշխարհներ մէկ գիշերուան մէջ պիտի այրէին,  
 Բոլոր ծովերը խանձուելով

Մոխիր պիտի թաւալէին.

Ու տիեզերքի փլատակներու մէջ

Իմ սիրտս միայն սքանչացած ու սարսափահար՝

Քու ակնարկին պիտի ծնրաղբէր

Վերածնուելու և սպանուելու համար.

Որովհետև

Քու ակնարկը չքնաղ և անեղ

Ուր աստղեր ու հրաբուխներ կը փրփրին

Իմ դագաղն է ու իմ արշալոյսը . . .

«Գեղարուեստ»-ի մէջ կան մի երկու ոտանաւորներ, որոնք  
 իրօք որ նոր բան են մտցնում մեր գրականութեան մէջ: Ոտա-  
 նաւորներից մէկը Արամ Չարըզինն է, որը պատմում է մի տաս-  
 ներեք տարեկան աղջկայ սիրոյ մասին: «Հորիզոնի» մէջ Շիրվան-  
 զադէն արդէն նկատել էր այդ երևոյթը և դատապարտել. ինչ էլ  
 որ ասելու լինի Վ. Մենակը ի պաշտպանութիւն Արամ Չարըզի,  
 պէտք է խոստովանել, որ առնուազն անպատշաճ և անյարմար է  
 այդ մատղաշ երեխայի սիրոյ մասին ճառել ու այդ սէրն ևս ի տես  
 և ի վայելումն ցուցադրել: Բոլորովին նման մի բան է «Պատիկ  
 աղջիկ մը»—վերնագիրը կրող փոքրիկ գրուածքը, որի մէջ Բա-  
 թումից ճառող Շահ-Սրմէնը պատմում է մեզ, թէ ինչպէս մի  
 փոքրիկ աղջիկ այդ պարոնի վրայ սիրահարուած է խելագարի  
 նման ու սա էլ անտարբեր նրա սիրոյ դէմ—խրատներ է տալիս

զգոյշ կենալ վաղաժամ սիրուց. «Երեխայ, երեխայ, քո անրիժ ճակատը ինչի՞ կը մրոտես կուրծքիս վրայ քսելով»։ Մարդ ահամայից ուզում է հարցնել. եթէ չես ուզում, որ այդ խեղճ երեխայի ճակատը քո կուրծքին քսուելով մրոտուի (երևի կուրծքը շատ սև է կամ աղտոտ) ինչո՞ւ չես արգելում, մի թողնի էլի՞: «Գիտեմ— շարունակում է Շահ-Արմէնը, դիմելով այդ պատիկ աղջկանը,— գիտեմ կը տառապիս . . . Դաճնօրէն կը հեծեծիս, որ ես իմ հասակիս ամբողջ բարձրութեամբ հպարտ եմ և անտարբեր շուրջս վիտացող քո ճկուն սլաք նետերէն. և ինչպէս կուռ զրահ նիզակներիդ փշրանքը կը թափուին ոտներուս տակ, ու ես լի հպարտութեամբ կանցնիմ, իսկ դու՝ աղուազին կը հեծեծես» . . . Մեզ թուում է, որ Շահ-Արմէնը շատ լաւ կանէր, որ իւր հասակի ամբողջ բարձրութեամբ նիզակներ չճօճէր մի երեխայի հանդէպ և ամենեին շուղարկէր տպագրութեան այդ անժիտ և ուռուցիկ տողերը ինչպէս և ամբողջ պատկերը: Մեր բանաստեղծներն ու գրողները ինչպէս երևում է սիրելի վերջացրել են մեծ օրիորդներին, հիմա սկսել են պատիկ աղջիկների յետևից ընկնել. կամ այլասերուել են . . . :

Բայց «Գեղարուեստ»-ի մէջ կայ մի ոտանաւոր, որ ամենեին չպիտի տպագրուած լինէր, դա Դանիէլ Վարուժանի «Ով Լալագէ»-ն է: Բանաստեղծը իւր սիրուհու հետ մի օր ման է գալիս այգու մէջ այն օրերին, երբ սիրուհին «յղութեան ծանր ամիսին մէջ էր»: Ապա մի նկարագրութիւն այգու այն աշնանային սերձութեան, պտուղների առատութեան: Նկարագրում է այգու մէջ աշխատող գերիները, որոնք «կը կթէին սարինան». նկարագրում է եթովպուհին, որ «խնձորենին կը թօթուէր ծիծերն ի վար, զոգին մէջ»: Զոյգը՝ հմայուած չորս կողմը տարածուած բուրմունքից հնձանների մօտից ժպտազին անցնում են ու տեսնում. «խափշկուհիներ գեռատի պարեգօտնին հանգրձած մինչև իրենց պորտին տակ՝ կը կոխէին խաղողն ատոք թրջելով մինչև իրենց պորտին տակ: Ու այդ ամենը տեսնելով շարունակում է բանաստեղծը զիմել իւր սիրուհուն ու ասել.

«Այն ասեն-թոյլ կուտան ինձ

Մոտավանել, Լալագէ—

Ես ունեցայ ընդվզումներ արիւնի:

Ու ցանկացայ արեգակին, հողին պէս

Բեղմնաւորել ինձ մերձեցող ամեն հունտ.

Ու բացի գեռ քեզմէ՝ տոբիովս ողողել

Այդիս մէջ քրքաւորող

Գերուհիներըս բոլոր . . .

Սա արդէն բացարձակ պորնոգրաֆիա է, ամենամերկ տեսակից: Մարդ ապշում է, թէ ինչ է մտածել բանաստեղծ Վարուժանը, որ համարձակուել է հասարակութեանը պատմել իւր վաւաշոտ կրքերի ու տոբիֆների մասին, նաև այն մասին, թէ ինչպէս ցանկացել է այգիի մէջ քըրտընոյ բոլոր գերուհիներին յղիացնել: Ու դեռ չքաշուելով շարունակում է.

«Ու-թոյլ տուր ինձ խոստովանիմ. Լալագէ—  
Երբ դու անդին կարկառուն նուռը ծառէն  
Կը քաղէիր ու յետոյ  
Կը խածնէիր լիաբերան հեշտանքով  
Անոր բոսոր մարգրիտներուն շարքն անուշ՝  
Ես ասդին թուխ եթովպուհին—որ Ղարաջ  
Հընձանին մէջ կըճմլէր կուզն—  
Համբուրեցի . . . բռնած հնդիկ մագերէն  
Պանկեցուցի ժըպտազին գլուխը կուրծքիս  
Ու հեշտաբուսըն շըրթներով, Լալագէ,  
Համբուրեցի . . .»

Ու դեռ մի բազմակէտ էլ գալիս է յետևից: Պ. Վարուժանն անշուշտ այդ «գեղարուեստական» կատրոնները կամաչէր հանդէս բերել մի կիրթ հասարակութեան մէջ, իր ծանօթների մտերմական շրջանում. բայց նա հանգիստ խղճով Հայոց գրականութեանն է տալիս իւր «տոբիֆների» և կրքերի այդքան մերկ նկարագիրը . . .

Ոտանաւորներից երկուսը ինքնին բաւականին գեղեցիկ՝ ստրկական նամանոգութիւն են. Սիմիկեանի գրածը—Շանթի «Լեռան աղջիկը»—սրէմայի նախերգանքին, իսկ Մեսեանի «Գարունը եկաւ» ուղղակի ներշնչուած է Թումանեանի «Անուշ»-ով:

Իննաստեղծական չափածոյ գրուածքներից երկուսը թւում են ինձ ամենից յաջող. մէկը Յակոբ Յակոբեանի «Անհուն ծաւալով» թարգմանութիւնը, արժանի մեր Հայկական ընտիր խոստամատեաններում տեղ գտնելու և գրական երեկոյթներում հանդէս բերուելու իւր իղէական բովանդակութեամբ և ընտիր ու գեղեցիկ լեզուով, իսկ միւսը Յ. Տէրենցի «Սիրոյ տագրից» աշուղական արուեստով գրուած ծանր ու երկար քառականները. որոնց առաջ բերած տպաւորութիւնն անմիջական է ու ամբողջական, խորապէս ապրած զգացմունքով և որ գլխաւորն է ունին համակող տրամադրութիւն, արևելեան աշխարհիկ իմաստութիւն. տեսէք ինչպիսի թախծոտ գեղեցկութիւն կայ հետևեալ տողերի մէջ.

Երազի պէս կանցնի կեանքը, աշխարհը մեզ շատ չի մնալ.  
Նորա սիրուն վարդն ու սոխակ, ծիծառը մեզ շատ չի մնալ.  
Սև մագերուս ձիւն կը ցանէ կեանքի ձմռան ձեռքը դաժան

Իմ անուշ եար, հուրն աչերիդ, չէ՞ վառը մեզ շատ չի մնալ:  
Թառամեցան, չոր խոտ դարձան անցեալ տարուայ վարդն ու շուշան,  
Սև հող մնաց տեղը ծաղկանց, ա՛յ դու ծաղիկ դու աննման.  
Սև մազերուս ձիւն կը ցանէ կեանքի ձմռան ձեռքը դաժան  
Եար, դու շուշան, քու մանուշակ ամառը մեզ շատ չի մնալ:

\* \* \*

Արձակ պատմուածքներից յաջող են քչերը. յատկապէս Ատրպետի «Գաղափարը յաղթանակեց», որի վերջին՝ տենդինցիոզ մասը կարող էր ամենեւին չլինել. ապա գեղեցիկ է Ոստիկի «Կամակատարը», որի իմաստն այն է, որ «երկու սիրտ որ իրար ուզեն. երկինք գետին, սար ու ձոր, ծառ ու ծաղիկ կուրախանան, կը խնդան, հազար բերնով նրանց օրհնենք կ'երգեն». Երկու սիրտ բաժնելը մեծ մեղք է»: Գեղեցիկ են նոյնպէս «Յիրցան տերւներ» — Մ. Մանուէլեանի, «Անդորր պատկերներ» — Էմիլի և Թ. Թօրամանեանի «Թագի մարգարիտը», որի մէջ մեր տաղանդաւոր ճարտարապետը այլաբանօրէն պատմում է Անիի անցեալն ու պատկերացնում ներկայ անշուք վիճակը: Անբովանդակ և անիմաստ են «Պատիկ աղջկան մը» (Շահ-Արմէն), «Հրադէսը» անունը կրող միթոլոգիական գառանցանքը (Ա. Հացագործեանի), «Սիրոյ ողջոյնը» (Սաֆօյի), «Գիւթական երգը» (Սէյրիի), «Շուշանը» Սուրէնի. իղէպից և տրամադրութիւնից զուրկ է նաև Ճերմակի «Իտալուհին»:

Ընդհանուր առմամբ «Գեղարուեստ» ի խմբագիր պ. Գ. Լևոնեանին խորհուրդ կտայինք ընտրութեան մէջ աւելի խիստ և պահանջկոտ լինել, տեղ չտալ շատ ոտանաւորների և պատմուածքների, որոնք դեռ դժգունութիւնից և անորոշ տարտամ ձևերից դուրս չեն եկել և որ գլխաւորն է շատ մեծ զգուշութեամբ տեղ տալ սկսնակներին: Ես այնպէս եմ հասկանում, որ «Գեղարուեստ»-ը հանդէս պիտի բերի Հայոց գրական-գեղարուեստական կեանքի յայտնի երևոյթները, անպայման ճաշակաւորը, անպայման գեղարուեստականը. սկսնակները թող գեռ մարդուին ուրիշ հրատարակութիւնների մէջ, թող նրանք դեռ ցոյց տան իրանց տաղանդի անհերքելի ապացոյցներ, հանդէս բերեն գեղարուեստական-գրական շնորհքը, ապա թէ մեր միակ «Գեղարուեստ»-ի մէջ երևան: Դրա համար մեր պարբերական մամուլը բաւականին լայն ասպարէզ ունի:

«Գեղարուեստի» V-րդ բաժինը, որի վերնագիրն է «Մատենախօսական-քննական» իւր մէջ չորս յօդուած է պարունակում, որոնցից երկուսը ամբողջական չեն, մէկը վերջանում է, միւսը սկսում: Մեզ թւում է, այնպիսի մի հանդիսում, որպիսին

«Գեղարուեստն» է, յարմար չէ, որ կիսատ յօդուածներ լինին, այն էլ այնպիսի առատութեամբ (միայն այս համարի մէջ կիսատ յօդուածների թիւը վեց է): Յարմար չէ յատկապէս այն պատճառով, որովհետեւ հանդէսը ուշ ուշ է լոյս տեսնում տարեկան հազիւ մի երկու անգամ. մարդ մոռանում է յօդուածի կէսը, կորցնում է ամբողջի ներքին կապը, թուլանում է յօդուածի միութեան դիտակցութիւնը: Ամսագրերի ու աւելի շուտ շուտ հրատարակող պարբերական թերթերի մէջ հիմա աշխատում են մարդիկ կիսատ, թերի բաներ չտալ, ուր մնաց թէ «Գեղարուեստի» նման «ազատ» հրատարակութիւնների մէջ: Նիւթի այսպիսի առատութեան և բազմազանութեան, նաև այլազանութեան փոխարէն կարող էին մի երկու պատմուածքներ, մի քանի անգամ աւելի ոտանաւորներ գուրս մնալ և դրա փոխարէն ամբողջացած կարող էին երևալ կիսատ մնացած յօդուածներից մի քանիսը, դրա հետևանքն անշուշտ աւելի դրական կը լինէր և տպաւորութիւնն աւելի ամբողջական. որովհետեւ մի երկու թոյլ պատմուածքով և մի քանի անյաջող ոտանաւորներով պակաս կը լինէր «Գեղարուեստը», ուրիմն և մի փոքր աւելի ուժեղ և մի փոքր աւելի յաջող գուրս կը դարայդ հանդէսը, որն այնքան մեծ գործ կարող է կատարել մեր գեղարուեստական գրականութեան, գեղեցիկ գրականութեամբ և արուեստներով հետաքրքրւողների համար:

V-րդ բաժնի առաջին յօդուածը, որի հեղինակն է Յովակիմ Սօլօվեան, խօսում է գրականութեան մէջ տեղի ունեցող փոխադրեցութիւնների մասին և յայտնում է այն առողջ միտքը, թէ հայ գրականութիւնը, հայ կեանքը՝ կանգնած յառաջադիմութեան ճանապարհին՝ զեռ շատ բան պէտք է փոխ առնի Եւրոպական կեանքի և գրականութեան երևոյթներից, զեռ շատ պիտի ազդուի օտար հովերից, մինչև որ կարողանայ ինքնուրոյն ուղիներ հարթել իւր համար: Յանկանալ ինքնուրոյն լինել զեռ դա բաւական չէ, պէտք է ինքնուրոյնութեան համար նախապայմաններ ևս լինին: Բայց ես կասէի յարգելի Սօլօվեանին, որ նա ինքնուրոյն լինելու մասշտաբը շատ բարձր է ընդունում: Ինձ թւում է, որ Գամառ-Բաթիպան իւր բոլոր թարգմանութիւններով ու փոխադրութիւններով դարձեալ ինքնուրոյն է հէնց այն չափով, ինչ չափով որ նա ազգային բանաստեղծ է, ինչ չափով որ նա արտայայտիչ է հանգիսացել իւր ժամանակի հասարակական ցանկութիւններին և խոհերին: Ինչքան էլ Շիրվանզադէն ռուսական ունիւրից կամ Ֆրանսիական նատուրալիզմից ազդուած լինի, դարձեալ նա մեր ամենաինքնուրոյն և տաղանդաւոր գրողներից մէկն է, որովհետեւ ընդհանուր ընդունուած, տարածուած, համարեա համաշխարհային դարձած ձևերի մէջ նա տալիս է զուտ իրականը, տեղականը, որ խոր

ճշմարտութիւն է պարունակում իր մէջ, որ կեանքի վկան է իրական և ճշգրիտ, գեղարուեստական եղանակներով: Մեր գրականութիւնը չպիտի քաշուի փոխ առնել օտար գրականութիւններից և որքան եւրոպականի, ռուսականի ազդեցութիւնը մեծ լինի մեր գրականութեան վրայ, այնքան աւելի հարուստ կը լինի նա մըտքերով, իդէաներով: Եւ այդ ազդեցութիւնը զնալով մեծանում է: Բայց դա դեռ չի նշանակում, որ օտար ազդեցութիւնները արգելում են կամ նախապայման են ինքնուրոյնութեան: Մեր գրականութեան մէջ օտար ազդեցութիւնն այժմ կայ և մեծանում է: Բայց կայ դրան զուգընթացաբար նաև ինքնուրոյնութիւն, որ նոյնպէս մեծանում է:—

Այդ բաժնի երկրորդ յօդուածը պ. Մարգարի քննադատականի վերջին մասն է Դանիէլ Վարուժանի մասին: Դժբախտաբար այդ բանաստեղծը մեզ ծանօթ չէ դեռ, այնպէս որ քննադատի վերլուծութիւններն ու կարծիքները անկարող ենք գնահատման ենթարկել:—Չորրորդ յօդուածը Վ. Տէր Գէորգեանին է, որ գրական վերլուծութեան է ենթարկում Սունդուկեանի «Պէպօ»-ն և ուրախութեամբ արձանագրում ենք, որ այդ փորձը պ. Տ. Գէորգեանին յաջողուել է. մի հակիրճ յօդուածի մէջ նա տուել է «Պէպօյի» բովանդակութիւնը, գործող անձերի բնութագրերը, գործողութեան մտիւնները և դրամայի գնահատումը: Բոլորն էլ կարճ, կտրուկ և յաջող:—Մնացած յօդուածը պ. Երուանդ Ֆրանգեանին է, որի «Փիլիսոփայական վերլուծումի» մասին կուզէինք մի փոքր երկար կանգ առնել:

Պարոն Ֆրանգեան գրական մի յատկութիւն ունի, որին նա որքան շուտով վերջ տայ, այնքան աւելի իւր օգտին գործած կը լինի—գա նրա կրկնամուտութիւնն է. կրկին մուտքութիւնը չէ միտքս, այլ կրկնելու մուտքութիւնը: Նա սիրում է իւր մի անգամ ասածը կրկնել, մի, երկու և երեք անգամ և յաճախ նոյն հատուածի մէջ, նոյն երեսում և շատ անգամ մի քանի նախադասութիւն յետոյ: Փոխանակ որ և է միտք կարճ, ամփոփ և պայծառ գիտակցութեամբ, նիւթը, ասածը գիտակցելով արտայայտելու, նա վերցնում է մի նախադասութիւն ընդհանուր բառերով, ընդհանուր, յետևապէս անորոշ իմաստով ու առանց այն էլ այդ տարտամ միտքը մի շարք նախադասութիւնների մէջ անվերջ հոլովում, կրկնում. վերջը ստացում է այն, ինչ որ արդէն առաջ կար. դարձեալ նոյն կիսատութիւնը, դարձեալ նոյն տարտամութիւնը: Նրա որ և է իդէան, որ և է միտքը նախադասութիւնների այդ շարանի մէջ աստիճանաբար չի զարգանում, այլ հետզհետէ մթնում է, կորցնում իւր պայծառութեան առանց այն էլ փոքր մասը և դառնում ձանձրալի իւր վտիտութեամբ ու քիչ բան ա-

տելովք:—Ինչո՞ւ է այդպէս, մեզ թուում է նրա համար, որ պ. Ֆրանգեան այն ընդհանր, երբ ուզում է գրել որ և է բանի մասին—շատ քիչ բան ունի ասելու. և այդ շատ քիչ բանը փոխանակ փոքրիկ ծաւալի մէջ համառօտակի ու ամփոփ արտայայտելու—գրում է ընդարձակ և տարածուած, այդ է պատճառը, որ նրա գրուածքը դուրս է գալիս ջրալի, ընթերցողին ձանձրացնում է ու յոգնեցնում: Պ. Ֆրանգեանին բարեկամական խորհուրդ կը տայինք, որ հետզհետէ թուլացնէր իր այդ պակասութիւնը և մտքերն ամփոփէր, և որ գլխաւորն է նիւթի և ասելիքի պայծառ գիտակցութեամբ զինուած—նոր աշխատէր արտայայտուել. այն ժամանակ համոզուած ենք, ակնարկուած թերութիւնը չէր նկատուի նրա գրուածքների մէջ:

Մի երկրորդ կողմ, որ պ. Ֆրանգեանի գրուածքների մէջ աչքի է ընկնում, այդ այն է, որ նա սիրում է հանրածանօթ գաղափարները մի առանձին շեշտով, նախակարագիտի կամ մարգարէի մի բարձրայօն ապրումով յայտարարել ի լուր աշխարհի, իբրև մի գիւտ սեփական անձի. փաթաթել այդ գաղափարը մի շարք «փիլիսոփայական» խոհերի և խորհրդածութիւնների մէջ, այդ ամենասովոր, ամենայայտնի գաղափարների համար խօսել այնպիսի անձնավատահութեամբ, որ կարծես երկնային առաքելութիւն լինի, որ կարծես խաւարի մէջ նօտած բազմութեանը երկնային լոյս լինի: Եւ որպէս զի իւր այդ ամենասովոր գատողութիւնները գոնէ առնուազն մի անօտուր բան ունենան, ձգում է գրանց վրայով փիլիսոփայութեան համբերատար և բազմաչարչար պատմուածանը. անուանում է այդ խոհերը փիլիսոփայական, դատում և վեր է լուծում փիլիսոփաների պէս, իւր ապրանքը հանգէս է բերում որպէս «փիլիսոփայական վերլուծում»:

Որպէս զի մեր ասածը բոլորովին վերացական և անհիմն չթուայ ամենից առաջ իրան՝ պ. Ֆրանգեանին, մի երկու օրինակ կը բերենք ցոյց տալու համար նրա կրկնութիւնները, այս վերջին թերութիւնը. այլ և այն պ. Ֆրանգեան երբեմն մոռանում է այն, ինչ որ մի փոքր առաջ ասել է. և ասել է գրան բոլորովին հակառակ բան. դա ինչպէս ասացինք նիւթի պակաս մշակուածութեան, պայծառ գիտակցութեան պակասութիւնիցն է:

Ով ծանօթ է Ա. Իսահակեանի գրած ոտանաւորներին, ով կարդացածն ըմբռնել և գրա վրայ խորհել զիտէ—նրան անշուշտ յայտնի է, որ այդ մարդը տարուած է պեսսիմիստական հովերովոյ միայն այդքան, այլ ուղղակի պեսսիմիստ է. ու զնալով նա աւելի խորանում, աւելի յամառում է այդ տրամադրութեան մէջ: Եւ պէտք է ասենք, որ հայկական գրականութեան մէջ Ա. Իսահակեանի այդ կողմը հանրածանօթ է, ձանաչուած բոլորի կողմից:

Եւ եթէ մէկը այսօր վեր է կենում և «փիլիսոփայական վերլուծման» ենթարկում նրա գրուածքները—մենք բնականաբար իրաւունք ունենք սպասելու այդ պարտնից, որ նա կամ նոր կողմեր բաց անի նրա բնութեան մէջ և կամ թէ ակնարկուած, արդէն յայտնի բնութագիրը նոր եղանակով, նոր ձևով լուսարանի. երկուսից մէկը. կամ նոր գծեր բաց անել, տեսնել այնտեղ, ուր մինչև այժմ ուրիշները չեն տեսել, և կամ թէ եղած գծերը նոր լուսարանութեամբ հանդէս բերել: Եթէ ոչ կրկնութիւն և աւելորդաբանութիւն է հանդէս գալը, թէկուզ դա լինի փիլիսոփայականի զգեստներով բարուրուած:—Բայց այդպէս չի վարուում պ. Ֆրանգեան. նա գալիս է յայտարարելու ամբողջ հայ հասարակութեան, որ Ա. Իսահակեան պեսսիմիստ է, ու այդ յայտնի միտքը անվերջ հօլովում, փոփոխում, առանց մի նոր գիծ աւելացնելու, առանց մի դրական դիտողութիւն ունենալու, առանց լոյսի մի նոր նշոյլ նշմարելու, «Նա (Իսահակ.) ատում է մարդու ամբողջ կերտուածքը, նա ատում է և՛ համայնք, և հայրենիք, և օրէնք և՛ արդարութիւն, և՛ մարդու մտքերը, և՛ կրօնները, և՛ գործիքները» . . . և այդպէս անվերջ: Ա. Իսահակեանը սիրել է առջ կեանքը. «Սիրով մօտենում է մարդկանց, փարում է կեանքին, սիրում է կնոջ և ընկերներին. նա ապրում է փառքի և վայելքների մէջ, սեղանի նստում հօգրների և մեծատունների հետ, վէճի բռնում գիտունների և իմաստունների հետ. սիրում և փորձում ընկերներին, դիտում և տեսնում մարդկանց և օրէնքները» . . . Տեսնում և ատում է: Ու այդ բոլորը բառացի կարդում եմ մի երկու երես յետոյ, ամբողջ պարբերութեամբ, ու հարցնում. ինչու համար այդ կրկնութիւնները: Որպէս զի պ. Ֆրանգեանի ոճի առանձնայատկութիւնը (անվերջ կրկնութիւններով յօդուածի ջրալի դարձնելը) ցայտուն կերպով աչքի ընկնի, նրա գրած 23 տողի միջից ես կարտագրեմ այստեղ հետեւալ նախադասութիւնները: «Եւ նա փախչում է (խօսքը Աբուլ Ալա Մահարիի մասին է), փախչում իւր հայրենի օջախից, մարդուց, ընկերից, բարեկամից, օրէնքից, արդարութիւնից. նրա համար ատելի են այդ բոլորը: Այս է նրա գնահատական խօսքը: Նա անողոք և խիստ է իւր գնահատման մէջ, ըմբոստ և ազատ: Նա գրում է այն, ինչ զգացել է. ինչ ապրել, զանգուտել եւ սիւս է գտել: (Այստեղ արդէն պ. Ֆրանգեան մոռացաւ, որ խօսում էր Աբուլ Ալա Մահարիի և ոչ Ա. Իսահակեանի մասին): Նրա խօսքերը ուժեղ են և զաւարթիչ . . . որովհետեւ նա չի գրում զաւարթութիւն բողոքելու համար. ոչ. նա գրում է, որովհետեւ պահանջ ունի գրելու և միւս կողմից (մարդ սպասում է մի նոր բանի) գրում է այն, ինչ ապրել է, խորապէս զգացել . . . Եւ իսկապէս (դարձեալ լարում ենք ուշադրութիւն-

ներս մի նոր բան (սեղու) նրա խօսքերի, նրա մտքերի մէջ կայ  
 ոյժ, կայ քափ եւ կ'որոյ է ազգել . . . նա ազգում է . . . որովհետեւ  
 նրա գրելու ձեր արհեստական չէ» . . . Ու նոյն կրկնութիւնները,  
 նոյն անիմաստ հարկումները անվերջ, մշտական:—Կան և իրար  
 բոլորովին հակառակ մտքեր. մի տեղ պ. Ֆրանգեան գտնում է, որ  
 «Արուլ Ալա-Մահարին» Ա. Իսահակեանի ամենարարձր երկն է,  
 որովհետեւ «սա ունի ամբողջական բնաւորութիւն. սա օղակում է  
 շատ խոհեր և մտքեր, ապրումներ և գրութիւններ. . . Այդ գրուածքը  
 մի անժամանակ ամբողջական վերագնահատում է բովանդակ կեան-  
 քի»—մի ուրիշ տեղ, նոյն երեսի երկրորդ սիւնակում նոյն պ.  
 Ֆրանգեանը գրում է. «Ճիշտ է, Ա. Իսահակեանը պե՛տ երեւանի  
 չի գալիս «Արուլ Ալա Մահարի»-ի մէջ, ինչպէս և միւս գրուածք-  
 ներում, որպէս կազմակերպուած դեմք. նա պե՛տ չունի ամբողջա-  
 կան եւ լրիւ կերպարանք . . . Ա. Իսահակեանը դե՛ռ գտնում է  
 կազմակերպման ճանապարհին, նա եզնում, աշխատում է լրացնել  
 դեմքը . . . Ի՛նչ էստ է Ա. Իսահակեանի նման գրողի համար  
 միանգամայն կազմակերպուած եւ լրիւ դեմքով պուրս գալ:—Բայց  
 բաւական է պ. Ֆրանգեանի մասին: Լաւ ճանաչելով պ. Ֆրան-  
 գեանին որպէս շատ գրողի և ջանասէր աշխատողի, մենք ցան-  
 կացանք նրա հիմնական թերութիւններից մի երկուսը մատնա-  
 ցոյց անել, որից էթէ պ. Ֆրանգեանը ցանկանայ, կարող է օգ-  
 տուել:

Նախ քան «Գեղարուեստ»-ի մասին մեր գրախօսականը փա-  
 կելը, որն առանց այն էլ երկարեց, չենք կարող աչքաթող անել  
 մի երևոյթ, որը թէև շատ քիչ գեղարուեստական բան ունի իւր  
 մէջ, բայց խոշոր հասարակական նշանակութիւն է թագցնում.—  
 Դա մեր երկու յայտնի բանաստեղծների նամակագրութիւնն է:  
 Ա. Ծատուրեանի յօրելեանի առթիւ Իսահակեանը նրան մի նա-  
 մակ է գրում, որին Ծատուրեանը պատասխանում է: Եւ Յօրելեարի  
 թոյլաւութեամբ այդ երկու նամակները տպւում են «Գեղար-  
 ուեստ»-ի մէջ: Տեսնենք ինչ կայ այդ նամակների մէջ:

Իսահակեանը ողջունում է Ծատուրեանի գրական գործու-  
 նէութեան 25-ամեակը, որ նա ամբիժ և անստուեր միշտ պայծառ  
 հայեացքով առաջ է քայլել, ապա շարունակում է.

«Ոչ ոք չի կարող այնպէս խորագին զգալ այն յայտնի և  
 անյայտ տանջանքները, որ Գուր ասլը էլ էք 25 տարուայ մէջ,  
 բայց եթէ միայն Ձեր գրչի ընկերները, Հայկական վայրենի հա-  
 սարակութեան մէջ այդ մի պրօմթէական դարաւոր տառապանք  
 է, մի իսկական հերոսութիւն, որ ընկած է Ձեր և Ձեր ընկերների  
 զգալուն ուսերին» . . .

Ապա Ծատուրեան շնորհակալութիւն յայտնելով այդ «եղ-

բայրական սրտաբուլիս արձագանքի» համար, ինքն էլ նոյն տոնով գրում է իւր ընկերոջը. «է՞հ, բարեկամ, հայի հոգեբանութիւնից բան չես հասկանայ... Հայը ծիծաղում է, երբ պէտք է լալ, և լալիս է, երբ պէտք է ծիծաղել... Զմուռ էք կարծում, իմ պատուական գրչակից եղբայր, որ Ես կարող եմ մանկական դիւրախարութեամբ հաւատալ հասարակական ծափերին և ճառերին, կարող եմ հաւատալ հասարակական սիրոյ անկեղծութեան դէպի մեր մայրենի չարաբախտ գրականութիւնը, դէպի հայ գրական շարատանջ մշակներս... չեմ հաւատացել և չեմ հաւատում: Եւ սնց հաւատամ, երբ տեսնում եմ հայ լեզու, հայ գիրքը, հայ ստեղծագործ միտքը, յիբաւի ծաղրուած և արհամարհուած... սնց հաւատամ երբ մի ամբողջ շարք գրական մարտիրոսներ իր ժամանակին ճառերով ու ծափերով պսակուած և ապա՝ հասարակական ախուլախով, կեղծ արցունքներով հողին յանձնուած՝ դեռ այսօր էլ բողոքում են իրանց գերեզմաններից... Բողոքում են, որովհետեւ իրենց յետնորդները, իրանց գրական ժառանգները դեռ այսօր էլ հեծում են հասարակական վայրենի անտարբերութիւնից, դեռ այսօր էլ անքում են քաղցի և տառապանքի, ծաղրի և հալածանքի խաչի տակ»...

Այս սուգերը կարգում եմ ու մտածում. ինչ են ուզում մեր այդ բանաստեղծները. ինչու են երես շուռ տուել հայ ազգից և ինչու չեն հաւատում հասարակական զգացմունքի անկեղծութեանը. ինչու հայի հոգեբանութիւնը, որի իսկական պատկերն են իրանք լինելու, այդքան անհասկանալի է դառնում... ու դալիս եմ այն եզրակացութեան, որ այս հարցերի պատասխանը միայն մէկ է. մեր երկու բանաստեղծները զանգատուում ու զժգո՞ն են հայ ազգից ու հասարակութիւնից, որ սա նրանց ու նրանց սերունդները չի ապահովում, նիւթապէս չի բարձրացնում նրանց վիճակը... Այդ զանգատը, նմանօրինակ անբաւականութիւնները նոր չեն մեր կեանքի և գրականութեան մէջ: Մեր գրականութեան մշակները շարունակ զանգատուում են, որ հասարակութիւնը անտարբեր է դէպի իրանց, որ նա պարտաւոր է օգնել իր մշակներին և այլն: Եւ հէնց ամեն անգամ էլ անարգար և անտեղի եմ գտել այդպիսի զանգատները. և այս անգամ էլ ոչ պակաս անտեղի, անարդար և անյարմար եմ գտնում, երբ երկու բանաստեղծներ վեր են կենում և հայ ազգից և հասարակութիւնից պահանջում, որ իրանց ապահովեն: Հարցնում ենք. ինչն է բանաստեղծին իրաւունք տալիս այդ պահանջն անել, շեշտել յատկապէս հասարակական քար անտարբերութիւնը, իրանց նիւթական վիճակի անապահովութիւնը և այլն: Դա ինչ լալկան

տոն է որ երգում են մեր հասարակական գործիչները, մեր գրականներն ու ժուռնալիստները, մեր վիպասաններն ու բանաստեղծները, մեր գերասաններն ու ուսուցիչները: Հասարակութիւնը ինչպէս պիտի ապահովի բանաստեղծներին: Ես կարծում եմ, մի միայն մի եղանակով. կարդալով նրանց: Եւ հասարակութիւնը կարգում է այն չափով, ինչ չափով բանաստեղծը հասարակութեան հետ է խօսում, նրա հոգու, նրա մտքի թարգման հանդիսանում: Եւ եթէ դա այսօր դեռ լի ու լի չի կատարում, գրա պատճառը ոչ թէ հայի հոգեբանութիւնն է, որ իբր թէ իւր մայրենի գրականութիւնը չի սիրում, այլ ուսման պակասութիւնը գրագիրութեան և մայրենի գրականութեան իմացութեան պակասը: Ինձ թւում է, միանգամայն անտեղի է այդ ծանր մեղադրանքը, որ բարդում են հայ «վայրենի» հասարակութեան, «ապերախ» իրականութեան վրայ: Սխալ և անհիմն է միանգամայն, երբ հայ իրականութեան սպեցիֆիկ յատկանիշ են համարում այնքան մաշուած և ծամծմուած «գնա մեռիւր արի սիրեմ»—ասացուածքը, որ ամենից քիչ թերեւ հայ իրականութիւնն է առաջ բերում: Միթէ այսօր մեր տաղանդաւոր գրողներից օրինակ Շիրվանզադէն, օրինակ Թումանեանը, Լէօն և ուրիշները իրաւունք ունին գանգատուելու հայ անտարբերութիւնից. երբէք. որովհետեւ հայ ընթերցող հասարակութիւնը, որ գիտէ և ճաշակ ունի հասկանալու մեր գրականութեան կեանքը—կարգում է այդ հեղինակները և գնում նրանց գրքերը: Թերեւ կը ցանկանային մեր բանաստեղծներն ու գրողները, որ նրանց աշխատութիւնները տասնեակ և ասելի հազար օրինակներով տարածուէին. այդ ես էլ կը ցանկանայի. բայց գրա համար նախ պէտք է ունենանք ընթերցողներ—գրագէտներ. չմոռանաք, որ կովկասում հայերի մէջ գրագէտների թիւը հազիւ 20<sup>0</sup> լինի. և այդ խղճալի թուով երբ մենք այսօր այդքան գրագէտներ և բանաստեղծներ ու վիպասաններ ենք պահում, եթէ այդքան թերթեր և պարբերական հրատարակութիւններ ենք լոյս աշխարհ հանում, դա ևս մեծ դործ է և արժանի ուշադրութեան: Մեր բանաստեղծները առանձին շեշտով ծանրանում են հայ բուրժուազիայի վրայ, որ նա չի հետաքրքրում մայրենի գրականութեամբ, չի կարգում, չի ապահովում: Մի կողմ թողած մասնաւոր և խմբական յաճախակի նուիրատուութիւնները, որ հայ բուրժուան անում է հայ գրականութեանը, ևս հարց եմ տալիս. որ ազգի բուրժուազիան առանձնապէս հետաքրքրուում է իր մայրենի գրականութեամբ. եթէ շուրջներդ նայէք—կը տեսնէր, որ ամենուրեք պատկերը միևնոյնն է, և հայ իրականութեան վայրենութեան ու ապերախտութեան վրայ ծանրանալը առնուազն ապերախտութիւն է, մասնաւոր այն-

պիսի գրողների և բանաստեղծների կողմից, որոնք սիրուած են ու կարգացուած են հայ մտաւորականութեան լայն խաւերում:

Պարոն Ծատուրեան չի հաւատում հասարակական ծափերին և նրա յօրելեանի առթիւ արտայայտուած զգացմունքներին ու հարց է տալիս, «Լեր էր այդ հասարակական սէրը, երբ ես՝ գրականութեան մշակներիցս մէկը՝ անողորմ կտրուած իմ սիրած գործից, որպէս կաթնածարաւ մանուկը մօր ըստինքից, տասնեակ տարիներ կեանքս մաշում էի այլ և այլ հայ աղաների կանտօրներում, նոքարութեան խեղդուկ և սպանիչ մթնոլորտում...» — Ամբողջապէս թիւրիմացութեան և միամտութեան արգիւնք են այդ տողերը. աղաները ամեն տեղ աղա են, լինեն հայ թէ գերմանացի. նրանք հրքէք չեն հետաքրքրում իրանց նոքարների ներքին կեանքով: Ի՞նչ է. պարոն Ծատուրեանը, նրա հետ էլ Իսահակեանը միթէ կարծում էին, թէ հայ հասարակութիւնը պիտի գար հանէր Ծատուրեանին մասնաւոր ծառայութիւնից ու նրան ապահովէր. կամ միթէ Ծատուրեանն ու մեր միւս բանաստեղծները կարծում են, թէ միայն հայ իրականութեան մէջ է, որ բանաստեղծը աղաների կանտօրներում նոքարութիւն է անում: Անշուշտ նրանց լաւ յայտնի կը լինին Թր. Հերքելի օրագիրները կամ Գ. Կիլիերի յուշատետրը, որոնք նկարագրում են իրանց մարտիրոսագրութիւնը, բայց առանց բողոքի, առանց այդպիսի դառնութեան եւ մաղձի. և սակայն նրանց և նրանց նմանների տանջանքները շատ աւելի խորն են եղել ու ազդող, քանի որ շրջապատի հասարակութեան անտարբերութիւնը շատ աւելի մեծ է եղել ու սպանիչ: Վերջին երկու տասնեակ տարիների մեր հայ կեանքը պալիս է արդէն մեզ համոզելու, որ հայ «ապերախտ» և «վայրենի» իրականութիւնն ևս գիտէ գնահատել իւր տաղանգաւոր և շնորհալի, իւր շիտակ և լուսամիտ զաւակներին: Այդ կողմից ամենից քիչ գանգատուելու տեղիք թերևս իրանք՝ մեր նշանաւոր ու տաղանգի տէր գրողներն ունենան: Իրան ապացոյց նաև այն յօրելեանները, որոնք այդպիսի առատութեամբ տօնուած են մեր իրականութեան մէջ, որոնց առթիւ ոչ պակաս գրողներ աւելի ապահովուած են ու նիւթապէս բարօր վիճակի մէջ գրուած ու որոնց առթիւ հանդէս բերուած զգացմունքներն ու հասարակական ցոյցերին ոչ մի իրաւունք չունեն մեր գրողները չհաւատալու: Երկուսից մէկը—կամ պիտի չանել այդ յօրելեանները, թոյլ չտալ, որ հասարակութիւնը ձեր յօրելեանները տօնի, և կամ երբ թոյլ էք տալիս ու ընդունում հասարակութեան ցոյցերն ու զգացմունքները, յետից չպիտի ասէք, թէ չէք հաւատում, թէ անկեղծ չեն հասարակութեան այդ զգացմունքները: Մեր հասարակութեան փոքրիկ ապերախտութեան դիմաց ձեր այդ վարմունքը ինձ թւում է աւելի մեծ ապերախտութիւն:

Գ. Ալբուհեան.